

**«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի**

**Շահառուների խորհրդի 2009 թվականի հունիս 14-ին ժամը 15:00-ին կայացած նիստի**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14**

<b>Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝</b>	
<i>Լիլիթ Ասատրյան</i>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<i>Կարեն Չաղոյան</i>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<i>Լիա Խաչատրյան</i>	«Չարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<i>Մաիլյան Նարինե</i>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<i>Ոսկանյան Արման</i>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<i>Աբրահամյան Թամարա, Անդրանիկ Վերանյանի յազոր ներկայացուցիչ</i>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<i>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</i>	«Հայաստանի բժշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
<i>Ենգիբարյան Վիկտոր</i>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<i>Միքայելյան Շիրակ</i>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
<i>Ղազարյան Տոնական</i>	«Շենիկ» ՋՕԸ
<i>Շահինյան Պողոս</i>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<i>Հովհաննիսյան Միհրան</i>	«Եղվարդ» ՋՕԸ
<i>Նազարյան Հազարապետ</i>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<b>Նիստից բացակայում էին՝</b>	
<i>Համբարձումյան Սասուն</i>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<i>Մովսիսյան Կարինե</i>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<b>Նիստին մասնակցում էին նաև՝</b>	
<i>Արա Հովսեփյան</i>	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Արմինե Միմոնյան</i>	Բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Վիկտորյա Գրիգորյան</i>	ՇԽ օգնական
<i>Ավագյան Ռուզաննա</i>	Սախարովի անվ. մարդու իրավունքների կենտրոն ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Անդրանիկ Վերանյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը: Օրակարգի վերաբերյալ ՇԽ անդամ Կ. Ջադոյանն առաջարկեց օրակարգի երկրորդ հարցը տեղափոխել առաջ:

Հաշվի առնելով վերոնշյալ առաջարկությունը՝ օրակարգը հաստատվեց միաձայն հետևյալ ձևակերպմամբ.

1. 16:00 - Տեղեկատվության ներկայացում ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների վերաբերյալ

*Ձեկուցող՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյան*

2. 16:30 - Տեղեկատվության ներկայացում՝ հուլիսի 14-ին կայացած ԿԽ նիստի արդյունքների վերաբերյալ

*Ձեկուցող՝ ԿԽ անդամներ*

3. 17:00 - Այլ հարցեր

ա) Զննարկում ՇԽ առաջիկա հաշվետու ժողովի և ընտրությունների վերաբերյալ

բ) ՇԽ անդամների մասնակցության և կարգապահական հարցեր

### **Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Օրակարգի առաջին հարցի հուլիսի 12-ին կայացած ԿԽ նիստի վերաբերյալ հանդես եկավ ԿԽ պատվիրակ Վիկտոր Ենգիբարյանը: Նա նշեց, որ օրակարգի առաջին հարցով քննարկվեց ՀՄՀ – Հայաստան ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի դադարեցման վերաբերյալ ՀՄԿ նամակից բխող ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հետագա քայլերի մասին հարցը: Որոշվեց, որ գյուղական ճանապարհների ծրագրով կնքված պայմանագրերը կլուծարվեն, իսկ ավարտված աշխատանքները կհանձնվեն ՀՀ Կառավարությանը: Քանզիված ճանապարհների մասով կկատարվի հնարավորինս շատ աշխատանք: Վ. Ենգիբարյանը ներկայացրեց նաև օրակարգի մյուս հարցերը՝

1. ՀՄԿ-ին ներկայացվող 12-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում ընդգրկված Արմավիրի և Թալինի մայր ջրանցքներում իրականացվող շինարարական աշխատանքների իրականացումը Համաշխարհային բանկին փոխանցելու և Վեց մայր ջրանցքների վերականգնման աշխատանքների երկրորդ փաթեթի մեջ ընդգրկված աշխատանքների նոր ծավալների վերաբերյալ ներկայացված տեղեկատվության քննարկում և հաստատում

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի շրջանակում նստվածաբանության, բետոնի և ջրի կառավարման մասնագետների կողմից ներկայացված հաշվետվությունների ներկայացում

4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի, Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածներ և Ջրից դեպի Շուկա բաղադրիչների գործընթացի որակական գնահատման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում

Ե. Ենգիբարյանը նշեց, որ այլ հարցերով ՇԽ անդամները բարձրացրել են մի շարք հարցեր, մասնավորապես, ինքը հարց է բարձրացրել Հայաստանում կիրառվող ստանդարտների վերաբերյալ, որոնք պետք է միտված լինեն դեպի եվրոպական չափանիշները:

Պ. Շահինյանը խոսել է Հանրային խորհրդին ուղղված ՇԽ դիմումի մասին՝ ծրագրից դուրս մնացած ինքնահոս համակարգերի վերաբերյալ: Խոսել է նաև ՀՀ ճանապարհային անվտանգության հայեցակարգի վերաբերյալ:

### **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանը ներկայացրեց ծրագրի ներկա կարգավիճակը և առաջընթացը: Նա մասնավորապես նշեց, որ առաջիկայում ամեն ինչ կարվի գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրով սկսած աշխատանքների մի մասը ավարտին հասցնելու նպատակով, որը մոտավորապես կկազմի 124 կմ՝ ներգրավվելով այլ դոնորների և կառավարության ռեսուրսները: Իսկ մյուս մասը կբերվի նվազագույն բարվոք վիճակի: Առաջիկայում կդադարեցվեն ընթացիկ պայմանագրերը:

Ոռոգման ծրագրով ակտիվորեն ընթանում են մրցութային գործընթացները, իսկ վարկային բաղադրիչը շարունակվում է. մինչև սեպտեմբեր պետք է սպառվի 5.5 միլիոն դոլար վարկ, իսկ վերջին եռամսյակում տրամադրվել է 1 միլիոն դոլար վարկ:

### **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

ա) ՇԽ ընտրությունների վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանը: Նա ներկայացրեց նախորդ տարիներին կարառվող փորձառությունը և նշեց, որ ՇԽ նախորդ երկու ընտրությունները համակարգել և իրականացրել է ՊՈԱԿ-ը: Ա. Հովսեփյանը հանդես եկավ առաջարկությամբ, որ այս տարի խորհրդի ընտրության աշխատանքները համակարգի և առաջնողի ՇԽ ներկա կազմը: Ա. Հովսեփյանը հիմնավորեց, որ ՇԽ անդամները ունեն ավելի մեծ լծակներ խրախուսելու և ներգրավվելու քաղաքացիական հասարակությունը ներկայացնող տարբեր ներկայացուցիչների:

Նախագահող Ա. Վերանյանը արտահայտեց այն կարծիքը, որ ՊՈԱԿ-ը հաջողությամբ է անցկացրել ՇԽ անդամների ընտրությունները նախորդ տարիներին և ձևաչափի փոփոխության կարիք չի տեսնում, իսկ ՇԽ անդամները հնարավորիս կցուցաբերեն աջակցություն ընտրությունների սահուն ընթացքը ապահովելու նպատակով:

Այս կարծիքը կիսեցին նաև ՇԽ անդամներ Կ. Չաղոյանը և Ա. Տեր-Հովակիմյանը:

Ա. Հովսեփյանը հավաստիացրեց, որ տեխնիկական բոլոր հարցերով կգբաղվեն ՊՈԱԿ-ի աշխատակիցները, իսկ ՇԽ անդամներից պահանջվում էր աջակցություն այնպիսի հարցերում, ինչպիսին են տեղեկատվության տարածում, գործընթացի մանրամասների լուսաբանում հետաքրքրված մասնակիցների համար, հատկապես մարզերում, որտեղ ինտերնետի հնարավորությունները սահմանափակ են:

ՇԽ անդամները ողջունեցին Ա. Հովսեփյանի առաջարկությունը և մի շարք անդամների կողմից հնչեցին նախաձեռնություններ, մասնավորապես,

Ա. Վերանյանն առաջարկեց տեղաբաշխել խորհրդի անդամների մասնակցությունը ըստ ՀՀ մարզերի և իրականացնել ընդհանուր տեղեկատվական գործունեություն մարզային ՀԿ սեկտորի շրջանում: Նա իր մասնակցությունը առաջարկեց Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում: ՇԽ անդամ Կ. Չաղոյանն առաջարկեց օգտվել իր կազմակերպության ռեսուրսներից, որոնք առկա են գրեթե բոլոր մարզերում:

ՇԽ անդամ Վ. Ենգիբարյանն էլ առաջարկեց աջակցություն ցուցաբերել ինտերնետի միջոցով տեղեկատվության հասանելիության ապահովմանը:

Քննարկման արդյունքում ՇԽ անդամների առաջիկա ընտրությունների կապակցությամբ միաձայն որոշեց՝

1. հանձնարարել ՇԽ կանոնակարգային հանձնախմբի անդամներին՝ ի դեմս Կ. Չադոյանի, Պ. Շահինյանի, Լ. Խաչատրյանի և Ա. Տեր-Հովակիմյանի, դիտարկել ՇԽ անդամների ընտրության կարգ և ներկայացնել նախագիծ.
2. ՇԽ առաջիկա նիստը, որտեղ կհաստատվի ընտրակարգի նախագիծը գումարել 2009թ. օգոստոսի 4-ին,
3. Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի օր նշանակել սեպտեմբերի 4-ը, իսկ ընտրությունը՝ սեպտեմբերի 26-ը,
4. ՇԽ հաշվետվությունը կազմելու համար ստեղծել հանձնախումբ՝ ՇԽ անդամներ Լ. Ասատրյանի, Ա. Վերանյանի, Ա. Ոսկանյանի, Վ. Ենգիբարյանի մասնակցությամբ, ովքեր կկազմեն ՇԽ հաշվետվության նախագիծը,
5. ՇԽ հաշվետվության օր նշանակել սեպտեմբերի 18-ը (մամլո ասուլիսի ֆորմատով):

բ) ՇԽ անդամների մասնակցության հարցի վերաբերյալ հնչեցին հետևյալ կարծիքները՝ Ա. Տեր-Հովակիմյանը կարծիք հայտնեց, որ ՇԽ-ի գործունեության ընթացքում անընդունելի է համարում բացակայությունները այն պարագայում, երբ կա փոխարինողների ինստիտուտը: Նա առաջարկությամբ հանդես եկավ փոփոխություն կատարել ՇԽ կանոնակարգում՝ հարցը կարգավորելու նպատակով:

Ա. Վերանյանը նշեց, որ անհրաժեշտություն չի տեսնում կանոնակարգում փոփոխություն կատարելու, քանի որ այդ որոշումն արդեն պետք է թողնել նոր կազմին:

Լ. Ասատրյանը կարծիք հայտնեց, որ այդ մասով կանոնակարգում փոփոխությունները անհրաժեշտ են. պետք է բացատրել ոչ միայն բացակայությունները, այլ նաև փոխարինողներ ներկայացնելու հանգամանքը, որը պետք է իրականացվի միայն խիստ անհրաժեշտությունների պարագայում: Լ. Ասատրյանը նաև առաջարկեց այլևս այս հարցին չանդրադառնալ և ՇԽ անդամների մասնակցության թերթիկն ընդունել ի գիտություն:

Առարկություններ չեղան:

գ) Խոսքը տրվեց ՇԽ անդամ Լ. Ասատրյանին: Նա նշեց, որ վերջերս կայացել է հանրային խորհրդի հանդիպումը ՀՀ նախագահի մասնակցությամբ, որտեղ բարձարցրել է ՀՍՀ-Հայաստան ծրագրից դուրս մնացած ինքնահոս համակարգերի հարցը՝ շեշտադրում կատարելով Մեդրիի համակարգին: Նախագահի դիրքորոշումը եղել է այն, որ ծրագիրը ամեն դեպքում ՀՀ կառավարությանն ծրագիրն է և ծրագրից դուրս մնացած բաղադրիչները իրականացվելու են որպես առաջնահերթություն:

*Նախագահող՝ Ա. Վերանյան*

*Քարտուղար՝ Վ. Գրիգորյան*

*14-րդ հուլիսի, 2009թ.*